

ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ*

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Արցախ, տեղանուն, բառակազմություն, կաղապար, դասակարգում, տեղանվանական արմատ, պարզ, բաղադրյալ, ածանցավոր, բարդ:

Ամփոփում

Արցախի տեղանունների բառակազմական խմբերն առանձնացնելիս հիմք են ընդունվել տեղանունների բառակազմական կաղապարների դասակարգման դասական և ժամանակակից սկզբունքները, մասնավորապես՝ Ջահուկյանի մոտեցումը (հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ):

Ըստ այդմ՝ Արցախի տեղանունները խմբավորվել են հետևյալ կարգով.

Ա. Պարզ կամ արմատական տեղանուններ. դրանք դասակարգվում են.

ա) բուն արմատական տեղանուններ, երբ բառարմատն է տեղանունը,

բ) տեղանվանական արմատներ, այսինքն՝ իբրև այդպիսին մտածվող և արմատական ընկալվող տեղանուններ:

Տեղանվանական արմատները լինում են՝

ա) տեղանվանական արմատ՝ արմատական միավոր. ինչպես՝ Առաքել, Ռև, Ուլուքար,

բ) տեղանվանական արմատ՝ բաղադրյալ բառամիավոր, որի մինչտեղանվանական իմաստը միացնել է. ինչպես՝ Շուշի (Շուշ+ի), Գիշի (Գիշ+ի), Հադրուֆ (Հա+դու+րուֆ), Խաչմաչ (Խաչ+մաչ),

գ/ տեղանվանական արմատ՝ բաղադրյալ բառամիավոր, որի մինչտեղանվանական իմաստն ընկալելի է. ինչպես՝ Մարտունի, Շահումյան:

Բ. Բաղադրյալ տեղանուններն էլ ունեն հետևյալ մասնակաղապարները.

ա) բարդ տեղանուններ. դրանք խմբավորվում են՝ տեղանուն-բառակապակցությունների կամ հարադրական բարդությունների և համադրական բարդությունների (ծուլական և կցական),

բ) ածանցավոր տեղանուններ. նախաածանցավոր կազմություններ չկան Արցախի տեղանվանական համակարգում, իսկ վերջածանցավոր կազմությունները արմատական, բարդ կառույցների նկատմամբ ժամանակի ընթացքում

* Ներկայացվել է 17. VII. 2025 թ., գրախոսվել է 04. VIII. 2025 թ., ընդունվել է տպագրություն 17. XI. 2025 թ.: Հոդվածը որպես գեկուցում ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 2025 թ. հունիսի 12–13-ին կազմակերպած «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանում:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

թվական գերակշռություն են ստացել: Տեղանվանակերտ մայրենի ածանցներ են ի, ուտ / ոտ (от), ք և գործառություն վերջինիս նույնարժեք եր-ը, բազմաթիվ են նաև փոխառյալ վերջածանցները՝ -անդա, -ապառ, -կերտ, -ստան, -շատ, -չեն, -իկ, -ուկ, -ավան և այլն:

Դասակարգման մեթոդը նոր է, բայց դրա կիրառումը նոր մոտեցումով և նոր նյութի քննությամբ ապահովում է արդյունքների համեմատելիությունն ու համադրելիությունը հայոց տեղանվանական համակարգի տվյալներին՝ դրանք հարստացնելով նոր ենթակաղապարներով:

Նախաբան

Արցախի տեղանունների բառակազմական կաղապարների ուսումնասիրությունը տեղանվանական համակարգի առանձնահատկությունների ճանաչողության հնարավորություններից է. այն մի կողմից բացահայտում է բառակազմական օրինաչափությունների դրսևորումը Արցախի տեղանվանահամակարգում, վերհանում յուրաքանչյուր պատմաշրջանի բնորոշ բառակազմական իրողությունները, մյուս կողմից՝ ամբողջացնում հայկական տեղանվանահամակարգի բառակազմական իրողությունների քննությունը: Դա որոշակիորեն տարբերվում է բառապաշարային մյուս միավորների նույնական քննությունից: Տեղանունների բառակազմական կաղապարների քննությամբ հնարավոր է որոշել դրանց բառակազմական յուրահատկությունները ոչ միայն համաժամանակյա կտրվածքով, այլև պատմական զարգացման ընթացքի տարբեր փուլերում: Ռուս տեղանվանագետ Յու. Կարպենկոն նշում է, որ տեղանվան բառակազմական կառուցվածքը արտացոլում է հենց տեղանվան պատմությունը և կողավորած փոխանցում է դրա ծագման մասին տեղեկությունը¹:

Տեղանունների բառակազմության դասակարգման սկզբունքները

Տեղանունների կառուցվածքային խմբավորման ի՞նչ սկզբունքներ կան, և որո՞նք են մեր քննության առանցքում:

Ռուս տեղանվանագիտության մեջ խնդրո հարցի շուրջ կան մշակված որոշ սկզբունքներ, ըստ որոնց՝ մեթոդաբանական երկու մոտեցում է հատկանշվում.

ա) իմաստաբանական. արդեն խսկ ձևավորված, պատրաստի տեղանվան ուսումնասիրություն,

բ) անվանագիտական. տեղանվան կերտման գործընթացի ուսումնասիրություն:

Այսպես՝ ուսումնասիրության Վյաչեսլավ Նիկոնովը տեղանունները բառակազմորեն ներկայացնում է արմատական, ածանցավոր, բաղադրյալ կաղապարներով²: Լեզվաբան Ա. Սուպերանսկայան դրանք խմբավորում է մենաբառ և բազմաբառ կաղապարներում՝ մենաբառ խմբում առանձնացնելով պարզ արմատական, պարզ բաղադրյալ, բարդ կաղապարները³: Հետազոտող լեզվաբան Ելենա Յվետկովան հետևում է Սուպերանսկայային՝ տարբերակելով մենաբառ և

¹ Карпенко. 1962, 13.

² Никонов. 2011, 64–77.

³ Суперанская. 1969, 87–108.

բազմաբառ խմբերը, ապա և առանձնացնում է հիմնական 3 տիպ՝ պարզ, բարդ, բառակապակցական, որոնց նկարագրությունը տրվում է՝ ավանդական 5 կարգ առանձնացնելով⁴։ Ձեխ լեզվաբան Վ. Շմիլաուերը, քննելով տեղանվանական միավորների կառուցվածքը, եզրակացնում է. 1) տեղանվան կառուցվածքային վերլուծությունը պետք է ներառի նաև իմաստային քննությունը. այսինքն՝ պիտի կատարել իմաստակառուցվածքային վերլուծություն, 2) պետք է հաշվի առնել, որ հատկանվան բառակազմությունը տարբերվում է հասարակ անունների բառակազմությունից⁵։ Բոլոր տեսությունները քննելով՝ Ե. Ջերնյախովսկայան նշում է, որ տեղանվան կառուցվածքային քննությունը հիմնվում է 2 տարրերի՝ բաղադրիչների քանակի և դրանք կերտող միջոցների վրա։ Ըստ այդմ՝ սկզբնապես պետք է դասակարգել ըստ բաղադրիչների քանակի, այսինքն՝ մենաբառ և բազմաբառ, ապա՝ հաշվի առնել դրանց ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները⁶։

Ըստ էության, ուստի տեղանվանագիտության մեջ նշված բոլոր տեղանվանագետները համակարծիք են հետևյալ հարցերում.

- ա) կարևոր է կառուցվածքային վերլուծությունը,
 - բ) առանձնացվում է կառուցվածքային 3 հիմնական տիպ՝ պարզ, բարդ, բառակապակցական,
 - գ) անհրաժեշտ է կառուցվածքային տիպերը տրոհել ըստ մասնակաղապարների,
 - դ) պետք է տրվի բազմակողմ՝ նաև իմաստային բնութագրություն։
- Հայերենի տեղանունները քննելիս Հ. Հյուբշմանը դրանք խմբավորում է պարզ, ածանցավոր, բարդ կաղապարներում⁷։

Ջահուկյանը բուն հայկական տեղանունները ըստ կազմության խմբավորում է 4 տիպերում՝

1. բաղադրյալ (տեղանուն-բառակապակցություններ)
2. բարդ
3. ածանցավոր
4. պարզ⁸։

Ն. Պողոսյանը, քննելով վերոնշյալ գրեթե բոլոր սկզբունքները, ճիշտ է համարում տեղանունները խմբավորել պարզ-արմատական և բաղադրյալ կաղապարներով, սակայն (իր իսկ մեկնաբանությամբ) հայերենագիտության մեջ ընդունված սկզբունքներից չչեղվելու նպատակով, այնուամենայնիվ, առանձնացնում է 4 խումբ՝ պարզ-արմատական, ածանցավոր, բարդ, բառակապակցական⁹։ Ըստ էության, վերահաստատում է Ջահուկյանական սկզբունքը։ Նույն սկզբունքով են քննված հայկական լեռնանունները Ս. Ջաքարյանի «Հայոց լեռնանունների իմաստային և կառուցվածքային քննություն» թեկնածուական ատենախոսության մեջ¹⁰։

⁴ Цветкова. 2012, 106–109.

⁵ Шмилauer. 1963, 55–65.

⁶ Черняховская. 1970, 55–65.

⁷ Հյուբշման. 1907, 267:

⁸ Ջահուկյան. 1987, 412–413:

⁹ Պողոսյան. 1999, 8:

¹⁰ Ջաքարյան. 2009, 20:

Արցախի տեղանունների բառակազմական խմբերը

Հիմք ընդունելով Ջահուկյանական մոտեցումները՝ Արցախի տեղանունների կառուցվածքային կաղապարները բնութագրելիս նպատակահարմար է խմբավորումը կատարել 2 տիպով՝ բաղադրյալ և պարզ։ Նախ՝ սա բառակազմական ընդհանուր կաղապարավորման սկզբունք է, որ տարածելի է բառապաշարային բոլոր միավորների վրա, այդ թվում՝ տեղանունների, այսինքն՝ այս դեպքում բառակազմական խմբերի դասակարգման սկզբունքների տարասեռություն չի առաջանում։ Իսկ պարզ և բաղադրյալ կաղապարները մասնակաղապարների տրոհելիս հիմք ենք ընդունում թե՛ բաղադրիչների ձևաբանական ու շարահյուսական հարաբերությունները, թե՛ տեղանվանակերտման գործընթացում դրանց առանձնահատկությունները՝ հասարակ անվան բառակազմական վերլուծության կաղապարը մեխանիկորեն չդարձնելով տեղանվան բառակազմական վերլուծության կաղապար։ Ընդ որում՝ ներկայացվող կաղապարներում ընդգրկվելու են ոչ միայն բուն հայկական, այլև փոխառյալ բաղադրիչներով տեղանունները՝ թե՛ հին, թե՛ նոր։

Այսպես՝ Արցախի տեղանուններն ըստ կազմության կարող են լինել.

1. Պարզ կամ արմատական տեղանուններ

Պարզ կամ արմատական տեղանունները կարելի է խմբավորել՝

1) բուն արմատական տեղանուններ, երբ բառարմատն է տեղանունը. Արցախի տեղանվանահամակարգում առավել քիչ են պարզ արմատական տեղանունները և սրանք հիմնականում հնագույն տեղանուններ են. ինչպես՝ Շոշ, Տող, Քերթ, Ագոխ, Հակ, Սոս, Սուս, Քիրս,

2) տեղանվանական արմատներ, այսինքն՝ իբրև այդպիսին մտածվող և արմատական ընկալվող տեղանուններ։

Տեղանվանական արմատները Ն. Պողոսյանը խմբավորում է 3 կարգում և տրամաբանորեն հիմնավորում իր մոտեցումը¹¹։ Ընդունելով նրա մոտեցումը՝ այնուամենայնիվ, տրվող ներխմբավորումը կատարել ենք տեղանվանական բառակազմական միջավայրում.

ա) տեղանվանական արմատ՝ արմատական միավոր է՝ այլ անվանումից առաջացած տեղանվանական արմատ. ինչպես՝ Առաքել, Ռե, Ուլուքաբ,

բ) տեղանվանական արմատ՝ բաղադրյալ բառամիավոր է, որի մինչտեղանվանական իմաստը միջազնել է, և այն ընկալվում ու գիտակցվում է իբրև առաջնային, արմատական տեղանուն։ Այս դեպքում բաղադրյալ կազմությունը տեղանվանակերտման արդյունք է. ինչպես՝ Շուշի (Շոշ+ի), Գիշի (Գիշ+ի), Հադրութ (Հա+դու+րու+թ), Խաչմաչ (Խաչ+մաչ),

գ) տեղանվանական արմատ՝ բաղադրյալ բառամիավոր է, որի մինչտեղանվանական իմաստն ընկալելի է, բայց բաղադրությունը տեղանվանակերտման հետևանք չէ, այլ պատրաստի բաղադրյալ բառամիավորը «ներբերվել է» տեղանվանական համակարգ. ինչպես՝ Մարտունի, Շահումյան։

2. Բաղադրյալ տեղանուններ. դրանք էլ ունեն հետևյալ մասնակաղապարները.

Ա) բարդ տեղանուններ,

Բ) ածանցավոր տեղանուններ։

¹¹ Պ ող ո ս յ ա ն. 1999, 9:

Ա) Բարդ տեղանունները խմբավորվում են՝

– տեղանուն-բառակապակցությունների կամ հարադրական բարդությունների, որոնք կարող են ունենալ նաև զուգահեռ համադրական ձևեր, ինչպես՝ Մեծ Առանք– Մեծառանք, Մեծ Կուանք–Մեծկուանք,

– համադրական բարդությունների:

Հարադրական բարդությունները կիրառական հաճախականությունը զիջում են համադրական բարդություններին. առաջիններն առավելապես մանրատեղանունների համակարգում են ակտիվ գործածական:

Համադրական բարդությունները բաժանվում են ձուլական և կցական բարդությունների:

Ձուլական բարդություններ են՝ Ակնադբյուր, Վարդաձոր, Մարիամաձոր, Ուխտաձոր:

Կցական բարդություններ են՝ Մանասինչեն, Նորչեն, Սարուչեն:

Տեղանվանական համակարգում բարդ տեղանունները դրսևորվում են 3 հիմնական կաղապարային սխեմաներով.

ա) որոշիչ-որոշյալ (ածական + գոյական) և (գոյական + գոյական),

բ) բացահայտիչ-բացահայտյալ (գոյական + գոյական),

գ) հատկացուցիչ-հատկացյալ (գոյական + գոյական):

ա) Առաջին՝ որոշիչ-որոշյալ (ածական + գոյական) կաղապարի վերլուծությունը հատկանշվում է՝

1. մի դեպքում՝ ածականը հանդես է գալիս տեղանվանական հատուկ գործածությունը՝ դառնալով տեղանվանակերտ բաղադրիչ: Այսինքն՝ այն, ավելանալով արդեն իսկ գոյություն ունեցող տեղանվանը, հակադրվում է և ստեղծում նոր տեղանուն. ինչպես՝ Մարաղա–Նոր Մարաղա, Այգեստան–Նոր Այգեստան, Թաղեր–Հին Թաղեր, Հոռաթաղ–Ներքին Հոռաթաղ, Թաղեր–Մեծ Թաղեր, Խերխան–Մեծ Խերխան, Փոքր Խերխան, Ճարտար–Գյուհե Ճարտար, Ղուզե Ճարտար և այլն,

2. մյուս դեպքում՝ ածականը չունի տեղանվանակերտ գործառնություն, այն դառնում է տեղանվանական բարդության բաղադրիչ. տեղանունից նոր տեղանուն չի կերտում: Հին տեղանուններից Զահուկյանը թեականորեն Մեծ Առանք // Մեծառանքն ու Մեծ Կուանքը // Մեծկուանքն է այս կաղապարում նշում, որովհետև սրանց 2-րդ բաղադրիչների ստուգաբանությունը միանշանակ է:

Այս մանրակաղապարի շրջանակում են նաև քննելի Կարմիր չուկա, Կարմիր գյուղ, Մեծ չեն, Հին չեն կազմությունները, որովհետև դրանց գերադաս բաղադրիչը տեղանիչ է, իսկ անվանական արժեք ունեցողն առաջին բաղադրիչն է:

Երկրորդ՝ որոշիչ-որոշյալ (գոյական + գոյական) կաղապարը ներկայացնող կառույցների գերադաս բաղադրիչները սովորաբար աշխարհագրական եզրույթներ են, և դրանք հիմնականում հնդեվրոպական ծագման միավորներ են: Հայկական տեղանվանագիտությունը դա բնորոշ է: Արցախի տեղանվանական համակարգում այս կաղապարով բնութագրվող բնականուն-բառակապակցություններ չկան, մինչդեռ մանրատեղանուններում այդ բարդություններն ամենահաճախականն են. ինչպես՝ Ակն ախպուր, Քար ախպուր (գ. Ակնադբյուր), Մոռ ախպուր (գ. Հաղորտի):

բ) Բացահայտիչ-բացահայտյալ կաղապարը Գ. Ջահուկյանը մեկնաբանում է հետևյալ կերպ. « ... երկրորդ բաղադրիչները սովորաբար տեղանվանական տերմիններ են, իսկ առաջինները բուն տեղանուններ, որոնք կարող են նաև առանց երկրորդ բաղադրիչների գործածվել»¹², ինչպես՝ Թարթառ գետ-Թարթառ, Քիրս սար-Քիրս: Առաջին բաղադրիչի ճշգրտող, բացահայտող դերն ակնհայտ է, բայց և միաժամանակ այն որոշչային արժեք ունի, հատկապես երբ նույնանուն գետ ու բնակավայր կարող են լինել, ինչպես՝ Խոնաչեն գետ, Խոնաչեն բնակավայր, Խաչեն գետ, Խաչեն գյուղ:

Բացահայտիչ-բացահայտյալ կառույցը, կարծում ենք, տեղանվանական համակարգում տարածամասնակյա կտրվածքով է դիտարկվում: Ընդ որում՝ տարբեր ժամանակահատվածներում՝ տարբեր կառուցվածքով. ինչպես՝ Դունավարճ՝ Կարմիր գյուղ, Չայլու՝ Այգեստան՝ Նոր Այգեստան:

Համաժամանակյա կտրվածքով անմիջական հաղորդակցման դեպքում մասնական բացահայտիչ-բացահայտյալ կաղապարի օրինակներ կարող են արտահայտվել՝ Ճարտար՝ Գյուլեն ճարտար, Հոռաթաղ՝ Ներքին Հոռաթաղ:

գ) Հատկացուցիչ-հատկացյալ կաղապարը ամենակենսունակն էր բուն հայկական տեղանվանակազմիչ կաղապարներից: Ընդ որում՝ որպես հատկացյալ հանդես էին գալիս աշխարհագրական տեղանիչ եզրույթները: Մանրատեղանունների համակարգում դրանք մեծ թիվ են կազմում. ինչպես՝ Հրբեշդանց տափ, Խաչին տափ, Խրզագին սար, Խաչին ձոր, Մինասէն տափ, Խրթնուվարէն ավալուր և այլն:

Արցախի բնականուճանների կազմության մեջ այդ կաղապարի կենսունակությունը համադրական բարդություն մեջ է դրսևորվում. ինչպես՝ Սարինչեն, Սեյդիչեն, Սարգսաչեն:

Հատկանշելի է, որ բնականուճանները հիմնականում համադրական բարդություններ են, իսկ մանրատեղանունները՝ հարադրական. վերջիններիս գերադաս բաղադրիչը հիմնականում տեղանիչ եզրույթ է՝ բնիկ կամ փոխառյալ, որը բնութագրում է աշխարհագրական օբյեկտը, և դա ուղղորդում է նաև անձանոթին՝ նրան հայտնի դարձնելով օբյեկտի նշանակությունը. մանրատեղանուններում սա կարևոր հատկանիշ է:

Արցախի տեղանվանական համակարգում չկան տեղանուն-նախադասություններ. թերևս, վարկածային է Հաղորտի բնականունը: Մինչտեղանվանական իմաստը՝ հաղորդել (բնակավայրի անվան մեկնությունը հիմնականում այդպես են ներկայացնում բնակիչները)¹³ կամ ի+ուլի+որդ+ել, կամ ուղիղ+որդ+ել բայի հրամայականը՝ հաղորդի՛ր կամ հուղորդի՛ր, ուղղորդի՛ր. բոլոր տարբերակները բարբառային արտասանությամբ կլինեն՝ հըղ-որթէ:

Արցախի տեղանվանական համակարգում բարդ տեղանունները մեծ թիվ են կազմում, և դրանց սերող հիմքը հիմնականում տեղանիչ բնիկ միավորներ են՝ ձոր, թաղ, քար, սար, գոմ, հող, ջուր, աղբյուր, գետ, տեղ և այլն: Սերող փոխառյալ հիմքերի գործառական ակտիվությունը ժամանակային գործոնով լեզվական ազդեցությամբ է պայմանավորված, և ըստ դրա՝ կարող է ակտիվանալ կամ մարել. ինչպես, օրինակ՝ բերդ-ը կենսունակ սերող հիմք էր XIV-XVIII դդ.՝

¹² Ջահուկյան. 1987, 413:

¹³ Մելքոնյան. 1990, 238, Ավետիսյան. 2009, 6-9, Հարությունյան. 2009, 41:

պայմանավորված այդ պատմաչրջանում հերթափոխվող ու մշտական պայքարով (հակապարսկական, հակաարաբական, հակասելջուկյան, հակամոնղոլական): Օրինակ՝ Զրաբերդ, Խաչեն բերդ // Կաշաղակաբերդ // Հավքախաղաց բերդ, Հանդաբերդ, Լևոնաբերդ, Խանդաբերդ, Խոխանաբերդ, Հակառակաբերդ, Բերդաքար, Ականա բերդ, Ուլուպապաբերդ և այլն:

Բ) Ածանցավոր տեղանուններ: Քննելով Արցախի տեղանունների բառակազմական այդ խմբերը՝ ջահուկյանական սահմանումները վերահաստատվում են, ու նաև հետաքրքրական իրողություններ են բացահայտվում: Ջահուկյանը նշում է, որ բուն հայկական ծագման բարդ տեղանուններն ավելի հաճախակի են, քան ածանցավոր կազմությունները¹⁴: Այդ իրողությունը հետագայում փոխվել է. տեղանվանական համակարգի պատմական զարգացման ընթացքում ածանցավոր կազմությունների թիվը զգալապես մեծացել է ի հաշիվ վերջածանցավոր կազմությունների շարքում մեծաթիվ դարձած հիբրիդ տեղանունների:

Նախածանցավոր կազմություններ չկան Արցախի տեղանվանական համակարգում, իսկ վերջածանցավոր կազմությունները արմատական, բարդ կառույցների նկատմամբ ժամանակի ընթացքում թվական գերակշռություն են ստացել:

Այսպես՝ տեղանվանակերտ մայրենի ածանցներ են՝ ի, ուտ / ոտ (օտ), ք և գործառություն վերջինիս նույնարժեք երբ: Ի-ով վերջավորվող բնականությունների քննությունը ներկայացվել է առանձին հոդվածով (14 բնականուն)¹⁵:

Ուտ/ոտ (օտ) տաղանվանակազմիչ մասնիկի հնդեվրոպական ծագման հավանականությունն է նշում Ջահուկյանը¹⁶. այդ ածանցով բաղադրված բնականություններ են՝ Հյունոտ, Կոճողոտը, Թաղոտը (Թեղոտ), Խարխափոտը (Նոր Խարխափոտ), Եղեգնոտը, Գաղթոտը: Անկախություն ժամանակաշրջանում Արցախի բնականվանացանկում -ուտ ածանցով նոր բնականություններ են արձանագրվել՝ Վարդուտ, Քարուտ (Դաշի), Գիհուտ (Մոլալար), Տանձուտ (Կարբեղակ): Բնական է, որ մինչտեղանվանական իմաստները դեռևս հստակորեն տարրորջելի են:

Տեղանվանակերտ արժեք ունի նաև հոգնակերտ ք-ն: Այն կարող էր հանդես գալ թե՛ առանձին, թե՛ այլ կազմիչների հետ՝ արտահայտելով հավաքականության արժեք: Հետաքրքրական է, որ նոր բնականություններում շարունակում է կենսունակ լինել ոչ թե ք-ի տեղանվանակազմիչ դերով հանդես գալը, այլ երևույթը՝ հոգնակերտի՝ որպես տեղանվանակերտի գործածությունը: Հայտնի է, որ դեռևս հնագույն ժամանակներում ցեղանվան, անձնանվան կամ աշխարհագրական այլ անունների և հոգնակերտ մասնիկների բաղադրությունները կերտվում էին տեղանուններ¹⁷: Այսպես՝ պատմական Արցախի 12 գավառներից 7-ում հոգնակերտ -ք մասնիկն առկա է. Մեծ Առանք կամ Մեծ Իրանք, Մեծ Կուենք կամ Մեծ Կուանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարսականք, Վայկունիք:

Բ-ով տեղանունների տարբերակներն են հոգնակի հայցականով ս-ով, ձևերը: Ինչպես՝ Վակունիս, Հախաթաղ: Ջահուկյանը նշում է, որ այն չպետք է

¹⁴ Ջ ա հ ու կ յ ա ն. 1987, 415, Ջ ա հ ու կ յ ա ն. 1995, 137–150:

¹⁵ Տե՛ս «Լեզու և լեզվաբանություն», 2025, № 1, 63–80:

¹⁶ Ջ ա հ ու կ յ ա ն. 1987, 415:

¹⁷ Ջ ա հ ու կ յ ա ն. 1987, 412:

չփոխել վրացական սեռականից ծագող և հայերենում իս-ով հանդես եկող ձևերի հետ¹⁸:

Արցախի բնականուններում հոգնակերտ մասնիկի տեղանվանակերտություն այդ հատկանիշը պահպանվել է, և արդեն նոր կազմություններում -ել/-ներ հոգնակերտները գիտակցվում են որպես տեղանվանակերտ մասնիկներ, ինչպես՝ Հողեր, Թաղեր, Գոմեր, Զրադացներ, Խուփեր, Անձալներ, Եզնազումներ, Հարությունազումներ, Սողոմոնազումներ, Պողոսազումներ: Հին հայերենյան -ք հոգնակերտը, որը նաև Արցախի բարբառում կենսունակ հոգնակերտներից է, նոր բնականուններում չի առկայանում: Սա պայմանավորված է նրանով, որ այսօր ոչ թե բնական, այլ փաստաթղթային-իրավաբանական ճանապարհներով են բնականվանումներն առաջանում, և բարբառային իրողությունները գրեթե անթափանց են մնում նոր տեղանվանակոչումներում:

Տեղանվանակերտ փոխառյալ ածանցները Արցախի տեղանվանակազմությունում մեջ զգալիորեն մեծաթիվ են՝ -անդա, -ապատ, -կերտ, -ստան, -չատ, -չեն, -իկ, -ուկ, -ավան և այլն: Նշյալ տեղանվանակերտ մասնիկներով կազմությունների առանձին քննություն իրականացվել է և հոդվածներով հրատարակվել¹⁹:

Բոլոր ժամանակների լեզվահարաբերությունների արտահայտությունը տեսանկյնի է հիբրիդ տեղանունների քննության ժամանակ:

Եզրակացություն

Արցախի տեղանունների բառակազմական կաղապարների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախի տեղանվանահամակարգում պարզ արմատական տեղանունները սակավաթիվ են և այլևս չեն համալրվում. բաղադրյալ միավորները տեղանունների համակարգի հիմնական միջուկն են կազմում, և տեղանվանակերտման գործընթացում դրանք աճման միտում ունեն: Տեղանունների բառակազմական ձևը միաժամանակ արտացոլում է պատմաքաղաքական պայմանները. յուրաքանչյուր բաղադրիչ կրում է տվյալ ժամանակաշրջանի լեզվամշակութային կնիքը:

Ներկայացված դասակարգման մեթոդը նորություն չէ, սակայն դրա կիրառումը նոր նյութի քննությամբ ապահովում է արդյունքների համադրելիությունն ու համեմատելիությունը հայ տեղանվանագիտության մեջ եղած տվյալների՝ ավելացնելով նոր մասնակաղապարներ:

Այսպիսով՝ Արցախի տեղանունների բառակազմական կաղապարների քննությունը մի կողմից՝ ներկայացնում է հայաշխարհի այդ հատվածի լեզվական իրականության զարգացման ընթացքը և արտացոլում տարածքի պատմամշակութային բազմաշերտությունը, մյուս կողմից՝ լրացնում ու ամբողջացնում է հայկական տեղանունների կառուցվածքի ընդհանուր պատկերը:

Լուսինե Մարգարյան — Բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական

¹⁸ Զ ա հ ու կ յ ա ն. 1987, 415:

¹⁹ Մ ա ր գ ա ր յ ա ն. 2016, 114–117, Մ ա ր գ ա ր յ ա ն. 2019, 133–137, Մ ա ր գ ա ր յ ա ն, 2025, 63–80:

Հետաքրքրությունները՝ Ղարաբաղի բարբառ և բանահյուսություն, Արցախի տեղանվանագիտություն: Հեղինակ է 2 գրքի և 31 հոդվածի:

ORCID:0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Ն. 2009, Հաղորտի, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 266 էջ:

Ջաքարյան Ս. 2009, Հայոց լեռնանունների իմաստային և կառուցվածքային քննություն. – Բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի սեղմագիր, Երևան, 20 էջ:

Հարությունյան Լ. 2009, Նշխարներ Արցախի բանահյուսության, Չորրորդ գիրք, Ստեփանակերտ, «Դիզակ Պլուս», 388 էջ:

Հիւբշման Հ. 1907, Հին հայոց տեղոյ անունները: Հայոց աշխարհի պատմական տեղեկագրութեան մասին ուսումնասիրութիւններով / Թարգմ.՝ Հ. Բ. Պիլէգիկճեան, Վիեննա, 448 էջ:

Մարգարյան Լ. 2016, Իրաներեն-ապատ եզրի իմաստագործառական բնութագիրը Արցախի բնականությունում. – «Արցախի պետական համալսարանի տեղեկագիր», էջ 114–117:

Մարգարյան Լ. 2019, Իրանական -šat/շատ և -šen/շեն բառարմատների իմաստագործառական բնութագիրը Արցախի բնականությունում. – «Արցախի պետական համալսարանի տեղեկագիր», № 2, էջ 133–137:

Մարգարյան Լ. 2025, Արցախյան բնակավայրերի –ի վերջնահնչյուն բաղադրիչով անվանումների քննություն. – «Լեզու և լեզվաբանություն», № 1, էջ 63–80:

Մելքունյան Ս. Ա. 1990, Լեռնային Ղարաբաղ, Երևան, «Լույս», 303 էջ:

Պողոսյան Ն. 1999, Հայոց տեղանունների բառակազմությունը. – Բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի սեղմագիր, Երևան, 20 էջ:

Ջահուկյան Գ. Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

Ջահուկյան, Գ. Բ. 1995, Հին հայերենի վերջածանցների ծագումը. – ՊԲՀ, № 1, էջ 137–150.

Карпенко Ю. А. 1962. Топонимика и её место в лексическом составе языка. – Черновцы: Черновицкий государственный университет, 314 с.

Никонов В. А. 2011. Введение в топонимику. М., изд. ЛКИ, 180 с.

Суперанская А. В. 1969. Структура имени собственного (фонология и морфология). М., «Наука», с. 87–108.

Цветкова Е. В. 2012. К вопросу о структурно-словообразовательной характеристике топонимов. – «Вестник» КГУ им. Н. А. Некрасова, № 4, с. 106–109.

Черняховская Е. М. 1970. История разработки топонимических классификаций. – Развитие методов топонимических исследований. М., «Наука», с. 55–65.

Шмилауэр В. 1963. Введение в топонимастику. Прага, Издательство Чехословацкой академии наук, 255 с.

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ МОДЕЛИ ТОПОНИМОВ АРЦАХА

ЛУСИНЭ МАРКАРЯН

Резюме

Ключевые слова: Арцах, топоним, словообразование, модель, классификация, топонимический корень, простой, производный, сложный.

При выделении словообразовательных групп топонимов Арцаха в качестве основы принимаются классические и современные принципы словообразовательной классификации в топонимике, в частности, подход Джаукяна (с учетом некоторых особенностей).

А) По своему составу топонимы Арцаха подразделяются на простые или корневые, которые классифицируются как:

а) собственно корневые топонимы, когда основа слова является топонимом;

б) топонимические корни, т.е. топонимы, воспринимаемые в качестве корневых.

Топонимические корни подразделяются на:

а) топонимический корень – корневая единица, образованная от другого наименования (например, Аракель, Рев);

б) топонимический корень – сложное слово, первоначальное значение которого утрачено и воспринимается как первичный топоним (например, Шуши, Гиши, Гадрут);

в) топонимический корень – сложное слово с сохранившимся смыслом, но не являющееся результатом топонимообразования, а заимствованное в топонимическую систему как готовое сложное слово (например, Мартуни, Шаумян).

Б) Сложные топонимы включают следующие подмодели:

а) сложные топонимы делятся на топонимические словосочетания или синтаксические сложные слова и морфологические сложные слова (агглютинируемые и композитные);

б) аффиксальные топонимы;

Префиксальных образований в топонимической системе Арцаха нет, а суффиксальные образования со временем получили численное преимущество над корневыми и сложными структурами. Собственно армянскими словообразовательными суффиксами являются: *-и*, *-ут/от*, *-к* и эквивалентный по функции *-ер*; заимствованные суффиксы в топонимообразовании Арцаха многочисленны: *-анда*, *-апат*, *-керт*, *-стан*, *-шат*, *-шен*, *-ик*, *-ук*, *-аван* и др.

Анализ показывает, что в топонимической системе Арцаха простые корневые топонимы немногочисленны и больше не пополняются. Сложные образования составляют основное ядро и имеют тенденцию к увеличению

в процессе топонимообразования. Важно отметить, что словообразовательная форма топонимов отражает также историко-политические условия: каждый морфемный элемент свидетельствует о языково-культурных реалиях соответствующего периода. Хотя сам по себе представленный метод классификации не является новым, но его применение к новому материалу обеспечивает сопоставимость и сравнимость результатов с имеющимися в армянской топонимике данными, обогащая их новыми подмоделями.

Լուսինե Մարգարյան – ք. փիլոլ. ռ., դոցենտ, մладший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: карабахский диалект и фольклор, топонимика Арцаха. Автор 2 книг и 31 статьи. ORCID:0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com

WORD-FORMATION MODELS OF ARTSAKH TOPONYMS

LUSINE MARGARYAN

Summary

Keywords: Artsakh, toponym, word-formation, model, classification, toponymic root, simple, compound, complex.

When identifying word-formation groups of toponyms of Artsakh, classical and modern principles of word-formation classification in toponymics are adopted as basis, particularly, Jahukyan's approach (with consideration to some features).

A) According to their structure, toponyms of Artsakh are grouped into simple and root toponyms that are classified as follows:

- a) genuine root toponyms, when the word root is the toponym itself;
- b) toponymic roots, i.e., names that are conceived as root toponyms.

Toponymic roots are classified into:

- a) toponymic root: a root unit derived from another name (e.g., Arakel, Rev);
- b) toponymic root: a compound word, the pre-toponymic meaning of which is lost and is perceived as a primary toponym (e.g., Shushi, Gishi, Hadrut);
- c) toponymic root: a compound word with a preserved meaning, but which is not a result of toponymic word-formation, instead being incorporated as a ready-made compound word into the toponymic system (e.g., Martuni, Shahumyan).

B) Compound toponyms include the following submodels:

- a) compound toponyms are grouped as toponymic phrases or syntactic compounds and morphological compounds (agglutinative and compositional);
- b) affixal toponyms.

There are no prefixal formations in the toponymic system of Artsakh, whereas suffixal formations have gained quantitative prevalence over root and compound

structures over time. Native Armenian toponymic suffixes include: *-i*, *-ut/ot*, *-k*, and the functionally equivalent *-er*; borrowed suffixes in the toponymic word-formation of Artsakh are numerous: *-anda*, *-apat*, *-kert*, *-stan*, *-shat*, *-shen*, *-ik*, *-uk*, *-avan*, etc.

The analysis shows that in the toponymic system of Artsakh, simple root toponyms are few and are no longer replenished. The compound formations constitute the main core and demonstrate a trend of growth in the toponymic creation process. It is notable that the word-formation structure of toponyms also reflects historical and political circumstances: each morphemic element bears witness to the linguistic and cultural realities of the corresponding period. Although the presented classification method is not new in itself, but its application to new material ensures that the results are comparable with existing data in Armenian toponymy, enriching them with new submodels.

Lusine Margaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Junior Researcher at the Department of Modern Armenian Language of the Hr. Acharyan Institute of Language, National Academy of Sciences of the Republic of Armenia. Scientific interests: Karabakh dialect and folklore, toponymy of Artsakh. Author of 2 books and 31 articles. ORCID:0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com